«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝<< Միջառարկայական կապեր>>

Հեղինակ - Սոնա Միրզոյան

Ղեկավարներ Ա. Թալալյան , Ա. Օդաջյան

Երևան 2022

Բովանդակություն

Հետազոտական աշխատանքը բաղկացած է վեց գլխից։

Յուրաքանչյուր գլխում ներկայացված է տեխնոլոգիայի կապը այլ առարկաների հետ։

Գլուխ առաջին- Տեխնոլոգիա- մաթեմատիկա

Գլուխ երկրորդ- Տեխնոլոգիա- Ես և շրջակա աշխարհը

Գլուխ երրորդ- Տեխնոլոգիա- Պատմություն, աշխարհագրություն

Գլուխ չորրորդ- Տեխնոլոգիա -Հայ գրականություն

Գլուհ հինգերորդ- Տեխնոլոգիա-Հայոց եկեղեցու պատմություն, ազգագրություն, դիցաբանություն, ազգային երգ ու պար, գրականություն

Գլուխ վեցերորդ -Տեխնոլոգիա- Ձեռնարկչություն, տնտեսագիտություն

Ներածություն

<<Տեխնոլոգիա>> առարկայի հիմնական առաքելությունն է ժամանակակից տեղեկատվական արդյունաբերական հասարակարգում սովորողներին նախապատրաստումն է ինքնուրույն աշխատանքային կյանքին, նրանց դաստիարակումը որպես կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, ցանկացած իրավիճակում ճիշտ որոշումներ կայացնող, ակտիվ, ինչպես նաև ցանկացած աշխատանք սիրող, հարգող և գնակատող անձնավորություն։ Այս հանրակրթական առարկայի դասաժամերի ընթացքում ձևավորվում և զարգանում է աշակերտների աշխատանքային, բնապահպանական, հայրենասիրական, հոգևոր, դաստիարակու-թյունը, զարգանում է նաև գեղեցիկը նկատելու, գնահատելու, սիրելու և արարելու կարողությունը։

Աշխատանքը ամենից առաջ բնության ու մարդու միջև կատարվող գործընթացն է, որի ժամանակ մարդը սեփական գործունեությամբ միջնորդավորում, կարգավորումէ ու հսկումնյութափոխանակությունն իր և բնության միջև։

<<Աշխատանք... ողջ մարդկային կյանքի առաջին հիմնական պայմանն է, և ընդսմին այն աստիճանի, որ մենք որոշ իմաստով պետք է ասենք. աշխատանքն ստեղծել է իրեն իսկ մարդուն>>:

Էնգելս

<<Աշխատասեր հողագործը տնկում է ծառեր որոնք պտուղը ինքը երբեք չի տեսնելու>>:

Ցիցերոն

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՛կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար։

Հ.Թումանյան

<<Մարդը լիովին մարդ է միայն այն ժամանակ, երբ նա աշխատում է>>:

Գայոտ

Տեխնոլոգիան դպրոցում պետք է լինի այն կրթական ոլորտը, որտեղ համադրվում են գիտելիքները մաթեմատիկայից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից, գրականությունից, երաժշտությունից և այլ հանրակրթական առարկաներից, ցույց են տրվում դրանց օգտագործումը արդյունաբերության, էներգետիկայի, կապի, գյուղատնտեսության, տրանսպորտի և մարդու գործունեության այլ բնագավառներ-ում: Նրա հիմնական խնդիրներն են՝

- գրաֆիկական, տեխնոլոգիական, նախագծային, դեկորատիվ-կիրառական, էսթետիկ ապրելակերպի դաստիարակում,
- տեխնոլոգիական գիտելիքների, գործնական և անվտանգ աշխատանքի ունակությունների ձևավորում,
- տարբեր մասնագիրությունների ուսումնասիրում և մասնագիտական կողմնորոշման ունակությունների ձևավորում
- տնտեսական և ձեռնարկատիրական գիտելիքների ուսումնասիրում և կիրառում:

Տեխնոլոգիան համալիր գիտություն է, որն իր մեջ ամփոփում է միջառարկայական կապեր՝խթանելով դրանց ուսուցման արդյունավետության բարձրացումը: Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը:Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: ՈՒսուցիչները պետք է օգտագործեն իրենց հմտությունները, մասնագիտական իմացությունը, ստեղծագործական միտքը, կարողությունների լայն շրջանակը: ԵՎ որպեսզի ուսուցիչը կարողանա հասնել ցանկալի արդյունքի պետք է կիրառի տարբեր մեթոդներ, իսկ ի՞նչ է մեթոդը: Ուսումնական մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է , հնար , հիմնական գործիք որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին: Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան այսօր մեծանում է առարկաների միջև կապերի բացահայտումը, դերն ու նշանակությունը: Այն ճիշտ և խելացի կազմակերպելու դեպքում կհարստանան և կընդլայնվեն սովորողների գիտելիքները: Իսկ դրան կարող են օգնել միջառարկայական կապերը: Միջառարկայական կապ ստեղծելու շնորհիվ դասի

ընթացքում ուսուցիչը երեխաների մոտ զարգացնում է ճանաչողական ակտիվությունը, նրանք սովորում են կատարել քննարկումներ, վարել հարցազրույցներ, պնդել իրենց տեսակետը, փաստարկներ բերել: Աշակերտը կատարում է վերլուծություն, բացահայում պատճառահետևանքային կապերը, գնահատում պատմական գործչին տվյալ պատմական ժամանակաշրջանում, զարգացնելով տրամաբանական մտածողությունը: Միջառարկայական կապ ստեղծելը ուսուցչի տրամաբանական կարողությունների շնորհիվ է կատարվում և յուրաքանչյուր ուսուցչի պարտավորությունն է զարգացնել աշակերտի տրամաբանությունը, երևակայությունը և հետաքրքրասիրությունը, ձևավորելով բազմակողմանի զարգացած, լայն մտահորիզոնով, ինտելեկտուալ, էսթետիկ վարքով անհատներ:

Մանկավարժական փորձը ցույց է տվել, որ ինտեգրված դասեր անցկացնելու հրաշալի հնարավորություն է ընձեռվում, երբ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը համադրվում է կերպարվեստի, մաթեմատիկայի, երաժշտության, մայրենիի, բուսաբանության, կենսաբանության, ֆիզիկայի, պատմության, կիրառական արվեստի, ֆիզիկայի հետ: Հետազոտական աշխատանքը կազմված է գլխից: Յուրաքանչյուր գլխում ներկայացված է տեխնոլոգիայի կապը հանրակրթական մյուս առարկաների և տարբեր գիտությունների և մասնագրտությունների հետ:

Գլուխ առաջին

Տեխնոլոգիա- Մաթեմատիկա և երկրաչափություն

<<Տեխնոլոգիա >>կրթական ոլորտը հանդիսանում է կրթության բաղկացուցիչ մասը, որը սովորողին զինում է անհրաժոշտ տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, առանց որի անհնար է երկրի լիարժեք սոցիալ- տնտեսական առաջընթացը, անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը: Ինչպես վերը նշվեց տեխնոլոգիան համալիր գիտություն է , որն իր մեջ ամփոփում է մի շարք առարկայական կեպեր: Այս ուսումնական առարկան սերտ կապված է մաթեմատիկայի և երկրաչափության հետ: Այն առաջին դասարանից սկսած ամուր հիմք է նախապատրաստում այդ առարկաների համար: Աշակերտները ուսումնասիրում են երկրաչափական պատկերները, երկրաչափական մարմինները , սովորում դրանց կառուցման և պատկերման ձևերն ու մեթոդները, ինչպես նաև օգտագործում են դրամք դեկորատիվ աշպատանքներ կատարելիս: Ուշադիր նայելով մեզ շրջապատող աշխարհին , մենք կարող ենք պարզել , որ բնության կամ մարդու ձեռքով ստեղծած ցանկացած բան հիմնված է տարրական երկրաչափական պատկերների և մարմինների վրա: Երբեմն մեր աչքերին անհրաժեշտ է միայն ակնարկ, կետ, ուրվագիծ՝ դրանցում ծանոթ առարկաները ճանաչելու համար: Յուրաքանչյուր առարկա կամ կենդանի ներկայացնել երկրաչափական պատկերներիվտեսքով, որի օգնությամբ աշակերտները ավելի լավ կտեսնեն և կսովորեն երկրաչափական պատկերները: Օրինակ ՝ կարող ենք պատկերացնել , որ կատվի գլուխը նման է շրջանագծի, իսկ մարմինը՝ եռանկյան: Կամ երեք , չափսերով իրարից տարբեր եռանկյուններով կարելի է ստանալ եղևնի: Եռանկյան և ուղղանկյան օգնությամբ ստանում ենք սունկ, և այլն:

Առաջադրանք 1- Երեխաները պետք է ուսումնասիրեն դասասենյակում իրենց շրջակատող առարկաները և ասեն ինչ երկրաչափական տեսք ունեն դրանք: Օրինակ՝ դուռը, գիրքը, տետրը, սեղանի մակերեսը՝ ուղղանկյան, էլէկտրական լամպը՝ շրջանագծի, գրատախտակը՝ քառակուսի և այլն:

Առաջադրանք 2-Աշակերտներին տրվում են երկրաչափական պատկերներ և նրանք պետք է դրանցով ստանան տարբեր պատկերներ կամ զարդանախշեր:



Օրգամին և խոսքի զարգացումը

<<Որքան մեծ է մանկական ձեռքի հմտությունը, այդքան խելացի է երեխան>>:

Վ. Սուխոմլինսկի

Օրիգամիի պատրաստման հիմնական նպատակներից է ցույց տալ այն ճանապարհներից մեկը , որով կարելի է զարգացնել երեխայի մտածողությունը, նաև այն , թե ինչպես կարելի է մատների բազմապիսի բազմաբնույթ մանր շարժումների օգնությամբերեխայի ձեռքը դարձնել ավելի հմուտ ու ճկուն: Ֆիզիոլոգները պնդում են, որ մեր մատները օրգանապես կապված են ուղեղային կենտրոնների և ներքին օրգանների հետ: Այդ պատճառով էլ մատների վարժանքը խթանում է օրգանիզմի ինքնակառավարմունը, ակտիվացնում է ուղեղի և մյուս օրգանների ֆունկցիոնալ գործունեությունը: Ձեռքի աշխատանքը նպաստում է երեխաների բաղմակողմանի ներդաշնակ զարգացմանը, կայուն ուշադրություն է պահանջում և ստիպում է երեխային մտածել: Պարզվել է մի հետաքրքիր օրինաչափություն.երեխաների մատների մանր շարժումներն ուղղակիորեն նպաստում են նրա խոսքի զարգացմանը: Եթե մատների մանր շարժումները համապատասխանում է երեխայի տարիքին, ապա խոսքի զարգացնմ էլ է նորմայի սահմաններում: Իսկ եթե մատների շարժումները հետ է մնում, ապա դանդաղում է նաև խոսքի զարգացումը չնայած ընդհանուր

շարժունակությունը կարող է նորմայի սահմաններում լինի, նույնիսկ ավելին։ ՈՒղեղի խոսքային կենտրոնների զարգացումը կատարվում է ձեռքի մատներից եկող ազդակներից։ Մատների վարժությունները խթանում են գլխուղեղի խոսքի կենտրոնների աշխատանքը և կտրուկ ակտիվացնում խոսքային գոտիների համաձայնեցված գործունեությունը, ինչը, ի վերջո, խթանում է խոսքի զարգացումը։ Ուստի մասնագետները խորհուրդ են տալիս նոր խոսել սովորող փոքրիկներին որքան հնարավոր է հաճախակի տալ այնպիսի առաջադրանքներ, որոնք կապված են մատների աշխատանքի հետ՝ մանրակերտել, կարել, նվագել երաժշտական գործիքներով, կտրատել։ Օրիգամիի զարգացնող հնարավորություններն անսահման են։ Օրիգամին ակտիվացնում է ոչ միայն մտածական գործընթացները, այլև մեծ նշանակություն ունի երեխաների կառուցողական մտածողության զարգացման, նրանց ստեղծագործական երևակայության, գեղարվեստական ճաշակի զարգացման գործում։ Նրա միջոցով երեխաները ծանոթանում են երկրաչափական հիմնական հասկացություններին (անկյուն, կիսորդ, կողմ, քառակուսի, եռանկյուն, անկյունագիծ և այլն...), զարգանում է նրա աչքաչափը, բառապաշարը հարստանում է մասնագիտական եզրույթներով։ Եվ, անկասկած, այն օգնում է ուշադրության կենտրոնացմանը։

Թուղթը երեխաների ստեղծագործական միտքը զարգացնելու անփոխարինելի նյութ է։ Այն ամենքին հասանելի, առավել մատչելի և հեշտ մշակվող նյութերից է։ Թղթից կարելի է պատրաստել ամենատարբեր շինվածքներ կիրառական բազմատեսակ նշանակությամբ։

Թուղթը մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականների գեղարվեստական գործունեության բնագավարում.գեղարվեստական աշխատանքներում այն անփոխարինելի նյութ է։ Թղթե շինվածքներից ավելի մասսայական գործածություն ունեն ծալումով պատրաստվող նմուշները՝օրիգամիները։ Դրանց պարզությունն ու ինքնատիպությունը միշտ էլ գրավել է երեխաներին։ Ոչ պակաս տարածված են նաև ապլիկացիաները։ Գործնականում անսահմանափակ քանակի շինվածքներ կարելի է պատրաստել թղթից՝հուշանվերներ, ծաղիկներ և այլն։ Թղթից պատրաստված նմուշները երեխաներին շատ են հրապուրում, իսկ դրանց պատրաստումը նպաստում է դիտողականության, գեղագիտական ճաշակի, կառուցողականության և

ստեղծագործական մտածողության զարգացմաբը։ Սակայն որևէ նմուշի, շինվածքի պատրաստումը չպետք է դառնա ինքնանպատակ, այլ պետք է ծառայի աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացմանը։ Թղթից շինվածքների պատրաստման ընթացքում կրտսեր դպրոցականները ծանոթանում են գծագրության գեղագիտական տարրերի հետ, սովորում են խնամքով նշագծումներ և չափումներ կատարել, ինչից և կախված է աշխատանքի որակը։

Այսօր անհնար է պատկերացնել մեր կյանքն առանց թղթի։ Իսկ թուղթը միշտ չէ, որ գոյություն է ունեցել։ Ասորեստանցիները ձողիկներով գրում էին կավե սալիկների վրա։ Հին եգիպտացիներն իրենց հերոգլիֆները պատկերում էին պապիրուսների՝ճահճաբույսի մամլած միջուկներից պատրաստված բարակ թերթերի վրա(մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբից մինչև վաղ միջնադար)։ Մ.թ.ա. 2-րդ դարում փոքրասիական Պերգամոն քաղաքում կաշվից պատրաստել են գրանյութ՝մագաղաթ(ասորերեն՝գալարված մատյան), որը քաղաքի անունով կոչվել է նաև պերգամենտ։ Այն պապիրուսի համեմատ թանկ էր, սակայն դիմացկուն, գրվում էր երկու երեսին և իրար վրա դրվելով ստացվում էր այժյամ գրքի ձևը։ Հայերը մագաղաթ են օգտագործել մ.թ.ա. թ-րդ դարից մինչև 8-ից 9-րդ դարը։ Մագաղաթի համար օգտագործել են մանր և խոշոր եղջերավոր մատղաշ անասունների մորթին։ Իսկ հին Ռուսիայում նամակները գրում էին կեչու կեղեվի վրա(կեչակեղևագիր)։

Թղթի ստացման եղանակը հայտնաբերել են չինացիները մ.թ.ա. 2-րդ դարում։ Սակայն թղթի ստացման գյուտը թվագրվում է մ.թ. 105 թ., երբ չինովնիկ Ցայ Լունը պաշտոնապես զեկուցեց կայսրին թղթի ստացման տեխնոլոգիայի գոյության մասին։ Երկար ժամանակ չինացիներն այն գաղտնի էին պահում, թաքցնում էին հարևան ժողովուրդներից։ 610 թվականին բուդդայական քարոզիչների օգնությամբ թղթի արտադրության տեխնոլոգիան հայտնի դարձավ ճապոնացիներին, և մեկ դար անց ճապոնացիների պատրաստած թուղթն ավելի լավորակ էր, քան չինականը։ 6-ից 7-րդ դարերում ճապոնացիները, հավանաբար առաջինը մարդկության պատմության մեջ , արդեն օգտագործում էին թղթադրամներ(<<Ֆեյ-Տյան>>՝թռչող դրամներ)։ Ճապոնիայում արգելվում էր թղթի ստացման գյուտը հանել երկրից։

Եվրոպացիներին թղթի ստացման եղանակը հայտնի դարձավ արաբներից։ 8-րդ դարում չինացիները պատերազմում էին արաբների դեմ։ 751թ. Սամարղանդից ոչ

հեռու՝ճակատամարտի դաշտում, արաբները գերի վերցրին թուղթ պատրաստող չինացի վարպետների, որոնք էլ բացահայտեցին թղթի ստացման գաղտնիքը: Բայց դա այնքան էլ հեշտ չստացվեց: Չինացիները թուղթ էին ստանում մետաքսի, հին ցանցերի կտորներից: Բայց քանի որ դրանց քանակությունը քիչ էր , հիմնականում որպես հումք օգտագործում էին որոշ թելատու բույսեր, օրինակ՝Չինաստանում աճող եղինջ(китайская крапива) կոչվող բույսը:Արաբների մոտ այդպիսի բույս չեր աճում, իսկ եղած մյուս բույսերից հնարավոր չէր թուղթ ստանալ: Երկարտև ապարդյուն փորձերից հետո որպես հումք օգտագործեցին հնոտի, իսկ որպեսզի թուղթն ամուր ստացվեր, ավելացնում էին սոսինձ՝օսլա: Եվրոպացիները թղթի արտադրության մեջ օգտագործում էին կենդանական սոսինձ՝ժելատին, իսկ որոշ երկրներում՝կանիֆոլ: Այդպիսի թուղթը լավորակ ու ամուր էր չինականից, նրա վրա կարելի էր գնել թանաքով: Թղթի տարածմանը նպաստեցին առևտուրը, խաչակրաց արշավնանքները: Արաբներից թղթի արտադրությունը փոոանցվեց Սիրիա, Պաղեստին, Հյուսիսային Աֆրիկա, Սիցիլիա, Իսպանիա: Եվրոպայում թուղթը երևան է եկել 10-ից 11-րդ դարերում: Հայաստանում թուղթ են օգտագործել սկսած 13-ից 9-րդ դարերից: Թղթի վրա մեզ հասած հայերեն ամենահին ձեռագիրը 10-րդ դարից է:

Թուղթ պատրաստող վարպետները նկատեցին, որ հնոտին այնքան էլ հարմար չէր՝ մեծ ջանքեր է պահանջում և չի բավականացնում թղթի անընդհատ աճող պահանջարկը, և շուտով սովորեցին փայտից թուղթ պատրաստել: Անտառում սղոցած փայտերը նախ դարձնում են կողճեր, ապա վերածում տաշեղների: Ամբողջ զանգվածը ամենաբազմազան գործողությունների է ենթարկվում, մինչև որ ստացվեր այն նյութը, որը պիտի անցներ թուղթ պատրաստող հսկա մեքենայի միջով ու ստացվեր հարթ, սպիտակ թուղթ: Այժմ հայտնի է թղթի մոտ 600 տեսակ: Ըստ ընդունված դասակարգման՝թուղթը բաժանվում է 11 կարգի՝ տպագրական, գրելու, գծագրական- նկարչական, էլեկտրամեկուսիչ, գլանակային, ներծծող, սարքերի համար (հեռագրային և այլն) լուսազգայուն, փաթեթավորման, պատճենահանման, արդյունաբերական, տեխնիկական: Տեխնոլոգիայի դասաժամերին շինվածքներ պատրաստելիս կարելի է օգտագործել թղթի և ստվարաթղթի համարյա բոլոր տեսակները:

Թղթի ծալումներով մոդելների ստեղծման արվեստն ավելի քան 2000 տարեկան է։ Արվեստի այդ տեսակը սահմաններ չի ճանաչում և մատչելի է բոլոր տարիքի մարդկանց՝և մեծերին, և փոքրերին։ Օրիգամին իր անվանումն ստացել է ճապոներեն <<օրի>>՝ ծալել, և <<գամի>>՝ թուղթ բառերից։ Հնում օրիգամին ոչ միայն արվեստ էր, այլև ճշգրտության և համբերատարություն ուսուցանող գիտություն։ Բացի այդ, արևելքում օրիգամին համարվել է խաղաղության, հանգստության, երազանքների իրականացման, ընտանեկան օջախի խորհրդանիշ։ Օրիգամիի արվեստը ծնունդ է առել Չինաստանում 1-2—րդ դարերի սահմանագծին, իսկ 6—րդ դարում այն թափանցել է Ճապոնիա և դարձել Ճապոնական մշակույթի անբաժան մասը։ Առաջին տպավորությամբ ենթադրվում է, թե թղթի կտորն ըստ նշագծի ծալելը մտածողության զարգացման իմաստով որևէ հիմնարար նշանակություն ունենալ չի կարող. լավագույն դեպքում կարող է ենթադրել միայն կատարողական գործունեություն։ Սակայն թեկուզ հենց այն, որ թուղթը ծալելով երեխան արդյունքում ստանում է տարբեր երկրաչափական պատկերներ, արդեն իսկ դրանով դրսևորվում է մաթեմատիկական մտածողությունը զարգացնելու մանկավարժական հնարավորություն։ Ամենատարբեր մասնագիտության տեր մարդկանց համար հիմնարար է մաթեմատիկական կրթությունը։ Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման արդյունավետության բարձրացումը կնպաստի միջին և ավագ դպրոցներում հանրահաշվի և երկրաչափության ուսուցմանը։ Երկրաչափական հասկացությունների յուրացումը ընդհանուր շատ բան ունի գեղարվեստական ընկալման հետ, քանի որ երկրաչափության ուսուցման մեջ մեծ տեղ ունի պատկերավոր մտածողությունը։ Կրտսեր դպրոցականների մտածողությունը ակնառու-պատկերավոր է և ակնառու- գործուն(զննական-գործուն)։ Ըստ էության, օրիգամիի հիմքը երկրաչափությունն է։ Մոդելի յուրաքանչյուր ծալք ուղիղ գիծն է։ Երկրաչափություն առարկան ինքնին ուսուցչի կողմից մատուցվում է որպես մաթեմատիկայի բարդ բաղկացուցիչ մաս։ Աշակերտները հենց սկզբից փակվում և վախենում են այդ առարկայից։ Օրիգամին, որը տրվում է խաղի ձևով, հիմքում վերցնելով քառակուսի մի թուղթ և տարբեր ծալվածքներ տալուց հետո ստանում ես տարածական տարբեր պատկերներ։ Երբ աշակերտը ինքն է պատրաստում այդ մոդելը, նա արդեն մտնում է խաղի և գիտության յուրօրինակ

աշխարհը, տալով մոդելներին երկրաչափական տարբեր լուծումներ։ Ահա այս եղանակով կարելի է հաղթահարել երկրաչափություն առարկայի մատուցումը։ Քանի որ օրիգամիի մեջ շատ կարևոր է յուրաքանչյուր ծալքի ճշգրտությունը, հետևաբար օրիգամին ճշգրիտ արվեստ է , իսկ քանի որ մաթեմատիկան էլ ճշգրիտ գիտություն է, նրանց միջև զուգահեռներ տանելը տրամաբանական է։ Օրիգամին կարելի է համարել յուրաքանչյուր բարդ ինժեներական կոնստրուկցիայի մի մասնիկ։ Քանի որ ձեռքի հմուրտ աշխատանքն ուղիղ կապված է ուղեղի զարգացման հետ, հետևաբար օրիգամին, որը ճշգրիտ կոկիկ ծալվածքների հմտություն է, այն երեխային սովորեցնում է ավելի կոկիկ և ճշգրիտ աշխատել, որն էլ խթանում է ուղեղի ճշգրիտ գիտությունների զարգացման վրա։ Օրիգամին իր հետ երեխայի մեջ ներմուծում է նաև բարության և նվիրվածության սերմեր։ Պատրաստելով տարբեր թղթե մոդելներ (ծաղիկներ, ձկնիկներ, փղիկներ և այլն), ապա նվիրում են մայրիկներին կամ հարազատ մարդկանց, խնամում իրենց պատրաստածը՝ վաղ հասակից երեխայի մեջ բարության, նվիրվածության, հոգատարության հիմք է ձևավորվում։ Օրիգամին օգնում է զարգացնել մաթեմատիկական մտածողությունը՝կշռադատել, տարածական մտածել, փնտրել առաջադրանքի լուծման ոչ ստանդարտ եղանակներ։ Մի հույն մաթեմատիկոս ասել է . <<Օրիգամին ավելի սերտ կապվածություն ունի մաթեմատիկայի հետ, քան դիզայնի, արվեստի հետ, քան որ բոլոր չափումները, ծալվածքները, հաշվարկները և տարածական երկրաչափական պատկերները կապված են այդ գիտության հետ>>։

<u>Համաչափություն , սիմետրիա</u>

Սիմետրիայի մասին պատկերացումները սկիզբ են առնում դեռևս մարդկային մշակույթի ակունքներում, արդեն պալեոթի արվեստում առկա է սիմետրիա (բավականին կատարյալ երկրաչափական զարդապատկերները փոքր ձևերի արվեստում)։ Նեոլիթյան զարդապատկերներում օգտագործվել է հայելային անդրադարձում, տրանսլյացիա, նմանություն և այլն։ Սիմետրիային առանձնահատուկ ուշադրություն են դարձրել Հին Հունաստանում , ուր այն ստացել է գերազանցապես համաչափության, համամասնության, կարգավորվածության, գեղեցկության և կատարելության գեղագիտական իմաստ։ Պյութագորականները, պլատոնականները սիմետրիկ ձևեր են վերագրել բոլոր օբյեկտներին, գտնելով, որ

դրանց հիմքում ընկած են կանոնավոր բազմանիստերը՝ քառանիստ բուրգը, խորանարդը, որոնք կազմված են հավասարակողմ եռանկյուններից։ Սիմետրիայի գաղափարներն օգտագործվել են միջնադարի և Վերածննդի դարաշրջանի գիտության մեջ և արվեստում (Նիկոլայ Կուզանացի, Յոհան Կեպլեր, Նիկոլայ Կոպեռնիկոս, Ջորդանո Բրունո և ուրիշներ)։

Ճարտարապետություն



Սիմետրիան ճարտարապետության մեջ.

Անիի Հովվի եկեղեցու հատակագիծը։

Արվեստի բնագավառում սիմետրիան ըմբռնվում է որպես ամբողջի առանձին մասերի համապատասխանություն և համամասնություն, տարածության մեջ դրանց ներդաշնակ դասավորվածություն։ Այդպիսի սիմետրիան տարածում է գտել ճարտարապետության մեջ, դեկորատիվ–կիրառական արվեստում։ Ճարտարապետության մեջ սիմետրիան կարող է դրսևորվել արտաքին ընդհանուր տեսքից (գոթական տաճարներ, Սպիտակ տուն) մինչև շենքի առանձին հատվածների նախագծումը (օրինակ՝ խճանկարչություն)։

Կավե և մետաղե անոթներ

Բրուտի անիվի ամենավաղ կիրառումից ի վեր խեցեգործությունը սերտ առնչություն է ունեցել սիմետրիայի հետ։ Բրուտի անիվի միջոցով ստեղծված առարկաներն իրենց ուղիղ հատումով օժտված են պտույտի սիմետրիայով՝ դրանով հանդերձ թույլ տալով ձևի լիակատար ազատություն ուղղահայաց ուղղությամբ։

Ծածկոցներ

Ասեղնագործ գործվածքները պատրաստվում են քառակուսի հատվածներից։ Ամեն փոքր հատվածու կրկնվում է տվյալ զարդանախշը, հեշտությամբ տրվում է սիմետրիայի կիրառմանը։

Գորգագործություն

Բազմաթիվ մշակույթներում սիմետրիայի կիրառումը դրսևորվել է գորգագործության մեջ։ Ամերիկյան նավահո ցեղի հնդկացիները կիրառել են հոծ անկյունագծեր և ուղղագիծ մոտիվներ։ Արևելյան շատ ժողովուրդների մոտ կան խրթին կենտրոններ ու եզրազարդեր, որոնք խորհրդանշում են տարբեր գաղափարներ։ Զարմանալի չէ, որ ուղղանկյուն գորգերը սովորաբար ներկայացնում են ուղղանկյան սիմետրիա, այսինքն այնպիսի մոտիվներ, որոնք արտահայտված են ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական առանցքով։

Երաժշտություն

Սիմետրիան չի սահմանափակվում տեսողական արվեստով։ Երաժշտության պատմությունը անդրադառնում է երաժշտության ստեղծման և ընկալման բազմաթիվ տեսանկյունների։

Երկրաչափական մարմինների փռվածքը

Տեխնոլոգիայի դասաժամերին <<Գրաֆիկա>> բաժնի շրջանակներում աշակերտները գծում են տարբեր երկրաչափական մարմինների փռվածքը, որից հետո պատրաստում դրամք։

Առաջադրանք 1- Աշակերտները պատրաստում են խորանարդ, որի նիստերի վրա գրում են հարցեր՝ տարբեր ուսումնական առարկաներից։ Ուսուցիչն աշակերտներին բաժանում է փոքր խմբերի, առաջին խմբի աշակերտները նետում են երկրորդ խմբի պատրաստած խորանարդը, և պատասխանում ընկած նիստի հարցին։ ԵՎ հակառակը։ Ուսուցման մեթոդը ավարտվում է, երբ յուրաքանչյուր խումբ պատասխանում է նախապես պատրաստած վեց հարցին։

Գլուխ երկրոդ

Տեխնոլոգիա- Ես և շրջական աշխարհը

<<Ես և շրջական աշխարհը>>ինտեգրված պետական պարտադիր առարկա է տարրական դասարանների համար: <<Ես և շրջական աշխարհը>> ուսումնական դասընթացը կոչված է օգնելու աշակերտին՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության անբաժան մասնիկ: Ինչպես տեխնոլոգիան այնպես էլ այս առարկան հուսալի հիմք է միջին և ավագ դասարանների համար, օգնում է նաև ուսումնասիրել տարբեր մասնագիտություններ և կատարել մասնագիտական նախնական կողմնորոշում: <<Տեխնոլոգի >> և<<Ես և շրջական աշխարհը>> ուսումնական առարկաների շրջանակներում երեխաները ճանաչում, ուսումնասիրում և հետազոտում են շրջակա աշխարհը, բնության տարրերն ու երևույթները, ճանաչում են իրենք իրենց, խոսում իրենց սիրելի զբաղմունքների և խաղերի մասին, իմանում որ նա բնության կարևոր մասն է: Տեխնոլոգիայի դասաժամերին երեխաները ուսումնասիրում և հետազոտում են շրջական առարկաները, իմանում թե ովքեր են պատրաստել այդ առարկաները և ինչ նյութերից: Փորձում բնական և արհեստաման նյութերից կատարել տարբեր դեկորատիվ աշխատանքներ , որոնց միջոցով գեղեցկացնում իրենց կենցաղը: Նյութերը լինում են բանական և արհեստական: Բնական են կոչվում այն նյութերը, որոնք ստանում ենք բնությունից՝ ճյուղ, կոն, տերևներ, քարեր, սերմեր և այլն: Արհեստական են կոչվում այն նյութերը, որոնք ստանում է մարդը՝պենոպլաստ, փայլաթիթեղ և այլն: Նյութերը ավելի լավ դասակարգելու և տարբերելու համար մենք կիրառում ենք ուսուցման վենի դիագրամա մեթոդը: Վենի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք կենտրոնում ունեն հատման մակերես: Հատման մակերեսում գրվում է ընդհանրությունները, իսկ շրջանագծերում՝ առանձնահատկությունները:

Առաջադրանք 1-



նյութեր են օգտագործում են կենցաղում,
կարելի է պատրաստել գեղեցիկ
կենցաղային իրեր և առարկաներ

Առաջադրանք 2-Աշակերտները իրենց շրջապատից նշում են որևէ առարկա և ասում թե ինչ նյութից է պատրաստված տվյալ առարկան, որից հետո պարզաբանում տվյալ նյութը բնական է թե արհեստական և ինչու։

Գլուխ երրորդ

Տեխնոլոգիա-Դեկորատիվ կիրառան արվեստ, Պատմություն և աշխարհագրություն

Իտալացի հայտի ճանապարհորդ Մարկո Պոլոն հայերի մասին ասել է՝ <<… որոնք հյուսում են աշխարհի ամենագեսեցիկ գորգերը>>:

<<Արվեստի նպատակն է մեր հոգուց մաքրել առօրյա կյանքի փոշին>>:

Պաբլո Պիկասո

<<Արվեստի նպատակն է ներկայացնել ոչ թե իրերի արտաքին տեսքը, այլ դրանց ներքին կարևորությունը>> :

Արիստոտել

<<Որքան բարձր է մշակույթը, այնքան ավելի բարձր է գնահատվում աշխատանքը>>:

Ուիլիեմ Ռոշեր

Մշակույթը ազգապահպան նշանակություն նշանակություն ունի: Այն դառնում է մեր ինքնության վկայականը, և ճիշտ պատկերացում տալիս ժամանակաշրջանի մասին: Մշակույթը և գիտությունը դարեր շարունակ սերտ կապի մեջ են եղել: Իզուր չի ասվում որ Հայաստանը թագարան է բաց երկնքի տակ: Այսօր այդ <<թանգարանային նմուշները>>պահպանության խիստ կարիք ունեն, քանի որ դրանք են մեր հին լինելու ապացույցը:

Հայկական կերպարվեստի հետաքրքրական բնագավառներից է «Դեկորատիվ-կիրառական արվեստը»: Դեկորատիվ-կիրառական արվեստը դեկորատիվ արվեստի և ժողովրդական ստեղծագործության նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծող ոլորտ է:

Դեկորատիվ արվեստն սկզբնավորվել է հասարակության զարգացման վաղ շրջանում: Դարերի ընթացքում այն կրել է տարբեր ոճերի և ուղղությունների ազդեցությունը: Մ. թ. ա. II հազարամյակում Չինաստանում ստեղծվել են բրոնզե գեղարվեստական կերտվածքներ, ոսկրե և նեֆրիտե քանդակազարդ առարկաներ, մ. թ. ա. V-III դարերում՝ բարձրորակ մետաքսե գործվածքներ, խեցեղեն, մ. թ. VIII–X դարերում ծաղկման է հասել ճենապակու, իսկ XIV–XVIII դարերում՝ խեցեգործական

արտադրությունը։ Միջնադարյան Եգիպտոսի դեկորատիվ-կիրառական արվեստում տարածված էին դաջածո գործվածքները, նկարազարդ խեցեգործությունը, կահույքի պատրաստումը, փայտի փորագրությունը և այլն։ Դեկորատիվ արվեստի գանձարանում իրենց ծանրակշիռ ավանդն ունեն նաև հայ վարպետները։ Կարի, ոսկերչության, դրվագման, խեցեգործության և արհեստների այլ տեսակներ Հայաստանում հայտնի էին մ.թ.ա. III հազարամյակից։ Հայկական ոսկերչությունն ու ակնագործությունը զարգացել են ոչ միայն Դվինում, Անիում, Արծնում, Վասպուրականում, Արցախում, Ախալցխայում, այլև Կոստանդնուպոլսում, Լվովում, Թիֆլիսում, Նոր Ջուղայում, Նուխիում, Շամախիում և այլուր։ Վաղ միջնադարից մինչև XIX դարը պատրաստվել են թանկարժեք մետաղներով, քարերով զարդարված, դրվագված, գրքերի նրբագեղ կազմեր ու մասնատուփեր։ Միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեին փորագրված ոսկրե իրերը, կարմիր կաշվե առարկաները, փայտե քանդակազարդ կերտվածքները։ IX–XIII դարերում Հայաստանում զարգացման բարձր մակարդակի են հասել կարը, կտորեղենի ձևավորումը, արտահանվել են բրդե, մետաքսե ինքնատիպ գործվածքներ։

Հայ ժողովրդի ասեղնագործ արվեստն անցել է երկարատև պատմական ուղի, ենթարկվել ժամանակի դաստին, հաստատվել որպես ժողովրդի դատին, հաստատվել որպես ժողովրդի հոգեբանության, ինտելեկտի ու ճաշակի զարգացումն իր մեջ կրող գեղարվեստական գործունեության ոլորտ, և իր երանգն է հաղորդել ազգային գեղարվեստական մտածելակերպին։ Գեղարվեստական մտածելակերպի ձևավորման վրա մեծապես ազդում են այն բնաշխարհն ու կենցաղը, որում ապրում է ժողովուրդը։ Բնաշխարհի հետ կապը տեսանելի է հայկական ասեղնագործ արվեստում։ Հայկական ասեղնագործությունը ինքնքատիպ է.այն տարբերվում է զարդանախշերով, զարդակարերով, կատարման տեխնիկայով, գույներով և ոճով։

Հայկական ասեղնագործ արվեստն, անցնելով դարերի մրջով , պահպանել է ինքնուրույնություն , միասնական ժողովրդական ոճի հիմնական գծերը և , միշտ ապրելով ժամանակի ժամանակի հետ, հարստացել է նորանորհորինվծքներով։ Ամեն մի ասեղնագործ նմուշ, լինելով որոշակի շրջանի մշակութային ավանդույթների արգասիք, նաև խորապես անհատականացված է, արտացոլելով ասեղնագործողի ճաշակը, տաղանդը, գույներ և զարդանախշեր ընտրելու, հորինվածքին տարբեր

պլաստիկ և ռիթմիկ լուծումներիհաղորդելու նրա ունակությունները։ Ասեղնագործությունը տարածված է եղել հայկական բոլոր շրջաններում։ Պահպանելով ազգային միասնական ոճը՝ ամեն մի դպրոց զարգացրել է ասեղնագործության իր ձևն ու տեսակները։

Տարազը պատմական տարբեր դարաշրջաններում զանազան երկրներին, ժողովուրդներին, էթնիկական և տարածքային խմբերին, բնակչության որոշակի շերտերին բնորոշ հագուստ՝ ձևվածքի, գույնի, նյութի տեսակի, արտաքին հարդարանքի (զարդեր, սանրվածք, բեղեր, մորուք, դաջվածք, ներկվածք և այլն) առանձնահատկություններով։ Յուրաքանչյուր ժողովրդի տարազը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, ազգային բնույթով, կենցաղով, տվյալ երկրի բնական արտադրանքով։ Չնայած հազարամյակներ ի վեր տեղի ունեցած պատերազմներին, արտագաղթերին, օտար տիրապետություններին, հայ ժաղավուրդը ավանդական տարազի մեջ կարողացավ պահպանել խոր հնությունից եկող տարազաձևերի, զարդանախշերի և գույների խորհրդանշական պատկերացումներն ու իմաստները։ Այդ են վկայում միջնադարյան պատկերաքանդակների, մանրանկարների, խեցեղեն նմուշների հետ նրանց ունեցած ընդհանրությունները։ Տարազային համալիրների բաղկացուցիչ մաս կազմող գլխի հարդարանքը, կրծքազարդը, ապարանջանը, գոտին, գոգնոցը կրում էին վաղնջական ժամանակներից նրանց վերագրվող պաշտամունքային, ծիսա-հմայական խորհուրդը։ Իր բոլոր տարբերակներով հանդերձ, հայկական տարազի մեջ ինչպես միջնադարում, գերակշռում էին չորս տարերքի գույները, որոնք 14-րդ դարի հայ մեծ փիլիսոփա, նկարիչ Գրիգոր Տաթևացու վկայությամբ արտահայտում են <<երկրի սևությունը, ջրի սպիտակությունը, օդի կարմիրը և հրո դեղինը>>՝խորհրդանշելով միաժամանակ բարոյական հատկանիշները.ծիրանի- խոհեմություն ու ողջախոհություն, կարմիր- արիություն և մարտիրոսություն, կապույտ- երկնավոր արդարություն, սպիտակ- մաքրություն։

Հայոց մշակութային համակարգի կարևոր ու ավանդական բնագավառների մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում գորգագործական մշակույթը։ Հայաստանում գորգագործությունը՝ իբրև արհեստ զարգացած է եղել դեռևս վաղնջական ժամանակներից։ Այս մասին են վկայում Արենի 1 քարայրում գտնված գործվածքները,

մ. թ. ա. 5-րդ դարի թվագրվող պազիրիկ գորգը, ինչպես նաև հայկական գորգարվեստի մասին մի շարք պատմաբանների կողմից պահպանված հիշատակություններ: Պատմական աղբյուրներում տեղեկություններ են պահպանվում այն մասին, որ ուրարտացիներն ու հայերը Ասորեստանին, Աքեմենյան Պարսկաստանին և այլ երկրներին մատուցել են գորգեր՝ որպես տուրք: Պատմական Հայաստանում գորգերն ու կարպետները համարվում էին առաջին անհրաժեշտության իրեր: Դրանք փռում էին հատակին, կախում պատերից և գործածում որպես ծածկոց: Գրեթե բոլոր բնակավայրերում գործում էին կարպետներ՝ քիլիմներ, ծածկոցներ, վարագույրներ, թամբեր, խուրջիններ, վերմակներ, աղի տոպրակներ, ձիու ծածկոցներ և գորգեր: Այս արհեստն այնքան սերտ էր կապված առօրյա կյանքի հետ, որ այն իմանալը պարտադիր էր: Գորգը նաև հայ աղջիկների օժիտի անբաժանելի մասն էր, ուստի վաղ հասակից նրանք սովորում էին այս արհեստն ու գործում իրենց օժիտի գորգերը:

<u>Վան-Վասպուրական</u>

Վանը նախկին հայկական քաղաք է, ներկայում քրդաբնակ քաղաք Թուրքիայի Հանրապետության Վանի մարզում՝ Վանա լճի արևելյան ափին:

Վանի արվեստը հայ ազգային մշակույթի կարևորագույն հատվածն է: Վանը հայկական կիրառական արվեստի գանձարանն է եղել, գուցե միակ կենտրոնը , ուր անընդմեջ պահպանվել են ժողովրդական ասեղնագործության դարավոր ավանդները: Վանի բնակիչները եղել են նշանավոր արհեստավորներ , կիրառական արվեստի վարպետներ: Վանի կիրառական արվեստին բնորոշ է պարզությունը , որը խարսխված է ժողովրդական խավերի՝կենցաղից թելադրված պատկերավոր մտածողության վրա: Գագիկ թագավորի շքեղ հանդերձանքը թանկարժեք էր, ոսկեթել և աշխատատար: Վանում ասեղնագործել են ոչ միայն թագավորի, թագուհու, իշխանների հագուստները, այլև վանեցի կնոջ և տղամարդու հագուստները: Կանացի տարազում կարևոր առանձնահատկություն էր աստիճանականությունը, երբ ընդհանուրի մեջ առանձին հատվածները (վերնազգեստը, գոգնոցը (մեզար), ասեղնագործ կրծկալը, գոտին, գուլպաները)լրացնում են միմյանց: Այստեղ իշխում էին կարմիրը, դեղինը և մուգ կապույտը: Մեծ Եղեռնի և հետագա տարիներին հայ ժողովրդին վիճակված փորձությունների հետևանքով

ոչնչացան հայ մշակույթի համար բացառիկ արժեք ունեցող անթիվ մասունքներ, այդ թվում՝ հայկական տարազի բազմատեսակ նմուշներ։ Օսմանյան Թուրքիայի բարբարոսության հետևանքով Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգներից տեղահանված ու գաղթած հայության կենտրոնը դարձավ Սուրբ Էջմիածինը։ Հենց այստեղ էլ հայ մեծանուն նկարիչներ Վարդգես Սուրենյանցը, Արշակ Ֆեթվաճյանը և Սարգիս Խաչատրյանը, ովքեր շրջում և օգնում էին թշվառ գաղթականությանը, ձեռնամուխ եղան նաև նրանց պատկերմանը։ Այս կերպ պահպանվեցին արևմտահայ տարբեր գավառները ներկայացնող տարազային համալիրները, որոնք հետագայում խթան հանդիսացան տարազի պատմության ուսումնասիրման համար։ Նախաքրիստոնեական ժամանակաշրջանի գոր-գարվեստին վերաբերող ամենահայտնի նմուշը Պազիրիկ կոչվող գորգն է։ Դրա ուսումնասիրությունը կարևոր է հատկապես գորգագործության ծագումնաբաական խնդրի առումով։ Գորգն աչքի է ընկնում գեղազարդման հարուստ համակարգով, գունային երանգների բազմազանությամբ և ամբողջական պատկերացում է տալիս 2500 տարի առաջ եղած գորգագործական տեխնոլոգիայի մասին։ Այսպես, արվեստաբաններ գտնում են, որ Պազիրիկ գորգը գործել են Վանի թագավորությունում և որ այն պետք է վերագրել հայկական մշակույթին։ Պազիրիկ գորգի ծագումը Հայկական լեռնաշխարհի հետ կապելու հարցում բազմաթիվ հիմնավորումների հետ միասին կարևոր փաստ է նրա կարմիր ներկանյութում Արարատյան դաշտի որդան կարմիրի առկայությունը, որը բացահայտել են Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժի մասնագետները։

<u>Կիլիկիա</u>

Կիլիկիան Փոքր Ասիայի հարավարևելյան հատվածն ընդգրկող շրջան։ Որպես վարչաքաղաքական հատված՝ եղել է առանձին միավոր՝ Խեթական թագավորության ժամանակներից մինչև Բյուզանդական կայսրություն՝ ավելի քան երկու հազար հինգ հարյուր տարի։ Այժմ գրեթե ամբողջությամբ պատկանում է Թուրքիայի Հանրապետությանը, բացի Քեսաբի շրջանից (Սիրիայի Արաբական Հանրապետություն)։ Ասեղնագործության բնագավառում Կիլիկիայում ստեղծվածը առանձին դպրոց է՝ իր գեղարվեստա- կիրառական առանձնահատկություններով , իր զարդանախշային համակարգով, իր անկրկնելի կարատեսակներով, ոճային

բնութագրումներով, որում զգալի են արևելքի և արևմուտքի հորինվածքային և զարդանախշային զուգորդումները: Կիլիկիայի կիրառական արվեստի արտադրանքը բարձրորակ էր, արտահամում էին միջազգային շուկաներ արժանանում էր բարձր գնահատականի: Կիլիկիայում գոյություն ենց ունեցել մի շարք ինքնուրույն ասեղնակարերի հատուկ մշակված ավանդական զարդանկարներ: Կիլիկիայի հայուհուն ծանոթ են եղել ասիական և եվրոպական բոլոր տեսակի թելերը, որոնք ասեղնագործությանը ճոխություն ու գեղեցկություն են հաղորդել: Գունային մեղմ երանգների մետաքսաթելը ոսկու հետ առանձնահատուկ նրբություն ու գրավչություն է ստեղծում: Յուրաքանչյուր քաղաքհայտնի է եղել իր կարատեսակներով: Բացի տանն աշխատող ասեղնագործ վարպետներից , Կիլիկիայում գոյություն են ունեցել նաև ասեղնագործ վարպետների արհեստակցական կազմակերպություններ, խանութ արհեստանոցներ: Ոսկեթելով բանված շքեղ զարդարանքները պատրաստել են այդ վարպետ մասնագետների ձեռքով: Հարուստ դասի թանկարժեք հանդերձները, եկեղեցական ոսկեթել , մարգարտաշար բանվածքներն ստեղծել են արհեստանոցներում, վանքերում: Կիլիկիայի տարազը, հայկական ազգային հագուստի մի տարատեսակ, որն առանձնանում էր զարդաձևերի, գունային համադրության և ամբողջ հորինվածքի իր ռիթմիկ ու ոճական նկարագրով:

Կիլիկյան երկու սեռի զգեստաձևերը ձևավորվել էին Հայկական լեռնաշխարհից այստեղ տեղափոխված տարբեր ազգագրական խմբերի հագուստների խառնուրդից: Այդ է պատճառը, որ նրա մեջ գերազանցում էին Բարձր Հայքի և Վասպուրականի տարազաձևերը՝ բնակլիմայական պայմաններից ելնելով՝ թեթևացած և նրբացած: Կանայք հագուստը, գլխի հարդարանքն ասեղնագործում էին ոսկեթելերով, մետաքսաթելով: Կապում էին թանկարժեք գոտի, գոգնոց(ֆութա), որն էլ հաճախ զարդարվում էր ոսկե դրամներով: Շապիկը սպիտակ էր կամ ներկված կտորից, հասնում էր մինչև սրունքները, կուրծքը երկար բացվածք ուներ: Կիլիկիայի կնոջ հանդերձանքը հիմնականում կտավից էր, մինչդեռ հայկական մյուս գավառներում միայն սպիտակեղենն էր կտավից: Վերնազգեստը երիզվում էր գործված կամ տպված կտորի ժապավենով: Գոտին նույնպես կտավից էր, ուներ 3 մետր երկարություն և ծայրերում ծոպավոր ժապավենազարդով էր: Կանայք գոտուց կախում էին արույրե շղթայով դանակ՝ առօրյա գործածության համար:

Գորգագործությունը ևս շատ տարածված է եղել Կիլիկիայուն։ Առավել տարածված են եղել բուսածաղկային գորգերնը, որոնց գեղազարդման համակարգում առանցքային նշանակություն ունեն բուսածաղկային բնույթի նախշերը՝ ծառանախշերն ու ծաղկանախշերն ու դրանցով կազմված հորինվածքները։ Ներառված են նաև այն տիպերը, որոնց գեղազարդման համակարգի հիմնական հորինվածքը վարդակ է՝ բուսանախշ հորինվածք, որը բազմաթերթ է, և ունենում է շրջանաձև ուրվագիծ։ Կարող է լինի իրական կամ երկրաչափականացված տեսքի։ Հարկ է ընդգծել, որ հայոց գորգարվեստում հատկապես նշանակալից է այս խմբին դասվող «Կենաց ծառ» նախշը, որն աչքի է ընկնում տարբերակների արտակարգ հարստությամբ ու, մանավանդ, տարածվածությամբ։ Ընդ որում, այս խմբին պատկանող գորգերի գեղազարդման համակարգում այն ունենում է ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդական տարրի նշանակություն։ Ընդհանուր առմամբ, բուսածաղկային հորինվածքները լինում են իրական կամ երկրաչափականացված։

Ասեղնագործությունը, գորգագործությունը, և առկասարակ կիրառական արվեստը տարածված է եղել հայկական բոլոր շրջաններում՝ կենտրոնանալով Վան-Վասպուրականի, Շիրակ- Կարինի, Սյունիք- Արցախի, Արարատյան երկրի, Կիլիկիայի, Ուրհայի և հայ մշակույթի երկու խոշոր կենտրոնների՝ Թիֆլիսի ու Կ. Պոլիսի, ինչպես և գաղթավայրերի դպրոց- օջախներում։ Կիրառական արվեստը, ազգագրական սովորույթների պահպանողոկոնության շնորհիվ ավանդական զարդանախշերը, գույները, կատարողականությունը, կատարման տեխնիկան և սովորույթները պահպանվել են ժողովրդի մեջ ու անցել սերնդեսերունդ։

Գլուխ չորրորդ

Տեխնոլոգիան -Հայ գրականությունը

Գրականությունը հասարակության հոգևոր կյանքի կարևոր բնագավառ է: Լայն առումով գրականություն է կոչում առհասարակ գրավոր խոսքը, նրա միջոցով շարադրված հասարակական քաղաքական, գիտական, փիլիսոփայական, հրապարակախոսական, մանկավարժական կամ գործնական բնույթ ունեցող երկերը, նեղ առումով՝ արվեստի հիմնական տեսակներից մեկը՝ գեղարվեստական գրականություն: Տարբեր ժամանաշրջաններում հայ գրողները իրենց ստեղծագործություններում անդրադարձել են հայ մշակույթի անկրկնելի գոհարմերին, դարձնելով ավելի ազգային, ցուցադրելով և ընդգծելով մեր կենցաղում օգտագործվեղ կիրառան արվեստի ամենատարբեր տեսակները, ներկայացնելով հայի աշխատասեր, ստեղծագործ տեսակը, հայուհու գեներով եկող շնորհն ու տաղանդը : Վերը նշվածի ամենավառ օրինակներից է՝

1 . Ղազարոս Աղայանի <<Անահիտ>> հեքիաթն է:

Հատված

Խոսակցության նյութը ամենից առաջ դարձավ նոր գորգը, որ իր գեղեցիկ նախշերով, գույների պայծառությունով և գործվածքի նրբությունով գրավեց հյուրերի ուշադրությունը:

— Այս ի՞նչ հրաշալի գորգ է, — ասաց Վաղինակը, — տանտիկինդ կլինի գործած, անշուշտ:

— Ո՛չ, ես կին չունիմ, ահա հինգ տարի է, որ կինս վախճանվել է: Այդ գորգը մեր Անահիտի գործածն է: Բայց ինքը չի հավանում, ասում է՝ իմ ուզածիս պես դուրս չեկավ: Մեկ նորը հինել է, ահա՛ այն ծածկված ոստայնն է, հույս ունի, որ այն պիտի իր ուզածի պես դուրս բերե:

— Մեր թագավորի պալատումն էլ չկա մի այսպիսի զարդ, — ասաց իշխաններից մինը, հետո դառնալով Առանին՝ ավելացրեց, — շատ ուրախ ենք, որ քո աղջիկն այսքան շնորհալի է

— Այո՛, և այս ամենը, ինչ որ բերել եք, ետ կտանեք և կասեք, որ ես իրան շատ հավանում եմ, միայն թող ներե ինձ, որ ես ուխտ եմ դրել՝ արհեստ չգիտցող մարդու չգնալ։ Եթե կամենում է, որ ես իր ամուսինը լինիմ, թող նախ և առաջ մի արհեստ սովորի։

2. Ավետիք իսահակյան <<Սասդիի վերջին գարունը>>ստեղծագործությունը.

Հատված

Նստեց ծաղկած հասմիկի տակ, Սպահանի գորգի վրա, և բռնեց դողդոջ մատներով վարդենու նոր բացված կարմիր-կանաչ կոկոնը և մրմնջաց յուրովի.

«Ինչպես մատաղ աղջիկը ժպտում է գգվող սիրականին, այնպես էլ վարդը իր շրթներն է բանում առավոտյան հովիկին»։

4. Դերենիկ Դեմիրճյան <<Ավելորդը>>

Հատված

Հենց այդ փոքրիկ սենյակում, անկողինների ծալքի տակ նստած էր մի տարեց կին։ Դա Հաճի աղայի անդամալույծ քույրն էր, Սրբունը, որ ամուսնու մահից հետո լվացք անելիս մի անգամ սաստիկ մրսեց, տիֆով հիվանդացավ և անդամալույծ եղավ, էլ չիմացվեց՝ տիֆի՞ց էր, թե արդեն տրամադիր էր։ Ականջներն էլ ծանր էին։ Հաճի աղան իր անվան չուտեցրեց, որ իր հիվանդ քրոջը ուրիշները պահեն և իր վրա խոսեն, հիվանդին բերեց իր տուն և անկյուն տվեց։ Խեղճ կինը ի բնե աշխատասեր և ինքնասեր, ուզելով մի բանով եղբորը վարձահատույց լինել ընտանիքի կարն ու կարկատանը, ինչպես և գուլպան իր վրա առավ, ու թեև նրա համար սաստիկ դժվար էր այդ աշխատանքն էլ, բայց նա անմռունչ ու կամովին անում էր։ Գեր էր, ծանր և սաստիկ նեղությամբ նստած տեղից շարժվում էր և գետնաքաշ մի կերպ դուրս գնում։

Գլուխ հինգերորդ

Տեխնոլոգիա-Հայոց եկեղեցու պատմություն, ազգագրություն, դիցաբանություն, ազգային երգ ու պար, գրականություն

Հայ ժողովուրդն իր հազարամյակների պատմության ընթացքում, անկախ սոցիալական ու քաղաքական պայմաններից, մշտապես ստեղծագործել է՝ ձգտելով համաքայլ ընթանալ համաշխարհային մշակութային գործընթացներին։

Ինչպես նշվեց մշակույթը ազգապահպան նշանակություն ունի։ Հայոց մշակույթի կարևոր մասն են կազմում կիրառական արվեստի զարգացած ճյուղերից մեկը՝տիկնիկագործությունը։ Կիրառական արվեստը, ինչպես նաև տիկնիկագործությունը սկսել է ձևավորվել և զարգանալ դեռևս նախաքրիստոնեական ժամանակաշրջանում և իր ուրույն տեղ է գրավում հայկական մշակույթում, ազգագրության մեջ։

Ծիսական տիկնիկների մեջ է ամփոփվել ժողովրդի մտածողությունը։ Ժողովուրդը ծիսական տիկնիկներին օժտել է չարը խափանող և հաջողություն բերող մոգական ուժով։ Այս տիկնիկները հայկական ավանդական տոների և ծեսերի կարևոր մասն են կազմել, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր պատմությունը։ Սովորաբար հայկական ծիսական տիկնիկներ պատրաստել են կանայք, օգտագործելով ամենատարբեր նյութերը՝ հիմնականում փայտ, թելեր, կավ, մետաղ, կաշի, մորթի, մազ, խմոր։

Նուրի կամ անձրևի հարս-ծաղկազարդ, վարդավառ

Նուրին համարվում էր ծաղկազարդի կամ վարդավառի խորհրդանիշ տիկնիկը, կամ անձրևի հարսը, որից երաշտի ժամանակ գյուղացիներն անձրև էին խնդրում։ Երբ մարդիկ տառապում էին ջրի սակավությունից, իսկ հողը չորանում և ճաքում էր, Նուրին սկսում էր արտասվել, և նրա արտասուքից հողը թրջվում էր, իսկ արտերն ու դաշտերը կենդանություն առնում։

Նուրին անպայման երկար վարսեր և մեծ նշաձև աչքեր է ունեցել, և հենց այս խոշոր աչքերից թափվող արցունքներն էլ կենդանություն են հաղորդել բնությանը։

Նուրիի շապիկը նկարազարդ էր, իսկ գոտին հյուսված էր յոթ ծիածանագույն թելերից։ Հնում տարբեր գավառներում Նուրի տիկնիկը պատրաստում էին նաև ցախավելից

կամ փայտից: Գլխին միշտ դնում էին ծաղկեպսակ և ամբողջությամբ նրան ծաղիկներով զարդարում: Ժողովուրդը Նուրիի մասին անգամ հատուկ երգ է հյուսել:

Ծաղկազարդի և վարդավառի տոնի ժամանակ աղջիկ երեխաները Նուրիին պարեցնելով և երգեր երգելով՝ պտտեցնում էին տնետուն, իսկ մարդիկ էլ դռներից և պատուհաններից ջուր էին ցողում Նուրիի վրա: Տան մեծ կինը նաև երեխաներին էր նվիրում որոշ մթերքներ. մեկը հավկիթ էր տալիս, մյուսը հաց կամ պանիր: Եվ այսպիսով տներից մթերքները հավաքելով՝ երեխաները խնջույք էին կազմակերպում: Եթե պատահմամբ անձրև էր տեղում, երեխաները հրճվում էին և ուրախանում, որ Նուրին իրենց աղոթքը լսել է և իրենց անձրև է տվել:

Ծաղկազարդ- (ծառզարդար, ծառկոտրուկ), գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն, որին հաջորդում է Ավագ շաբաթը:

Կատարվում է Զատկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա»:

Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում էին մինչև հաջորդ ծաղկազարդ:

Ծաղկազարդի օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հռչակված է որպես մանուկների օրհնության օր, քանի որ Տիրոջ՝ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն աղաղակում էին՝ ասելով. «Օրհնությո՛ւն, Դավթի որդուն» (Մատթ. 21:15): Ծաղկազարդի տոնից հետո՝ երկուշաբթիից մինչև Սուրբ Հարության տոնը կոչվում է Ավագ շաբաթ:

Տոնի արմատներն ու խորհուրդը

Ենթադրվում է, որ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում տոնը նվիրված է եղել ջրի և անձրևի աստվածուհի Նարին: Նարը պտղաբեր անձրևներ էր ուղարկում երկիր: Երաշտի ժամանակ մարդիկ տիկնիկների և ծիսական երգերի ուղեկցությամբ մաղթանքներ էին ուղղում Նարին, որպեսզի նա անձրև տար դաշտերին: Ծեսի մաս կազմող տիկնիկը ունի տարբեր անուններ՝ Նուրի, Հուրի, Խուճկուրուրիկ, Չիչի-մամա, Ճիճի-մումա և այլն[2]: Ծաղկազարդը եղանակի՝ գարնան պաշտամունքի տոն էր: Այն

նվիրված էր ոչ միայն ջրին, այլև ծառին ու ծաղկունքին։ Ծառի պաշտամունքը փոխանցվել է սերնդեսերունդ և համարվել բնության կենդանության ու վերապրումի արգասիք։ Տոնի հիմքում ընկած է նաև Կենաց ծառի գաղափարը։ Այն շեշտում է կյանքի վերընթաց զարգացումը՝ ծննդից մինչև ծաղկունք ու պտղաբերություն։ Դրա բարձրագույն նպատակը անմահությունն է։ Ծաղկազարդին բաժանվող ուռենու ճյուղեր։

Վարդավառ- Քրիստոնեական ավանդույթի համաձայն այդ օրը Հիսուս Քրիստոսը Պետրոս, Հակոբ և Հովհաննես առաքյալների հետ բարձրանում է Թաբոր լեռան վրա՝ աղոթելու։ Տապից ու հոգնածությունից առաքյալները քնում են, իսկ աղոթող Քրիստոսի վրա լույս է իջնում, նրա դեմքն արևի նման պայծառանում է, իսկ հագի զգեստը ձյունի նման ճերմակում այնպես, որ ամբողջ լեռը ողողվում է լույսով։ Այդ փայլից առաքյալներն արթնանում են և ականատեսը դառնում Քրիստոսի «Պայծառակերպության» և «Այլակերպության» հրաշքի։ Վարդավառ կամ Վարդեվառ, որպես քրիստոնեական տաղավար տոն՝ Քրիստոսի այլակերպություն կամ Քրիստոսի պայծառակերպություն, հայ ժողովրդական նախաքրիստոնեական և քրիստոնեական տոն, ըստ եկեղեցական տոնացույցի նշվում է Զատիկից 14 շաբաթ կամ 98 օր հետո, կիրակի օրը՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում։

Տոնի արմատներն ու խորհուրդը

Վարդավառը ծագմամբ հեթանոսական տոն է, որը, ըստ հայագիտության մեջ եղած տեսակետների, կապված էր Աստղիկ և Անահիտ աստվածուհիների պաշտամունքի, Ամանոր-Նավասարդի հետ։ Վաղնջական ժամանակներից հուլիս ամսին, դաշտային հիմնական աշխատանքներն ավարտելուց և հացահատիկը հավաքելուց հետո ընդունված սովորություն էր մեծ տոնախմբություն կազմակերպել՝ օրհնելով և զոհաբերություններ անելով դաշտը հովանավորող ուժերին։ Այսպես, տոնահանդեսի անհրաժեշտ դրսևորումներից էր հասկի փնջեր և նույնիսկ խրձեր տանել մեհյանները շնորհակալության տուրք մատուցելով այդ հասկի աճելուն օժանդակած աստվածներին, գառ զոհաբերել ջրերի ակունքների մոտ՝ ջրերի ոգիներին աղերսվող ուխտավայրերում, մեծարելով դաշտային աշխատանքներին խիստ անհրաժեշտ

ջուրը հովանավորող ուժերը։ Նուրին, հայ դիցաբանության մեջ ջուրն անձնավորող ոգի է, և նույնացվել է Ծովինար աստվածուհուն։

Նուրի տիկնիկը հիշատակվել է նաև հայ բանահյուսության մեջ՝

Նուրին, Նուրին եկել է,
Շալէ շապիկ հագել է,
Արծաթ գօտիկ կապել է,
Մեր Նուրիի փայը տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք։
Անձրե՛ւ, անձրե՛ւ, ցած արի,
Բուսցըրու ցորեն ու գարի։

Նուրի նուրին էկեր է
Շալե շապիկ հագեր է
-Նուրի նուրի ի՞նչ կուզես
Կթան կովից եղ կուզեմ
Չալ հավից հավկիթ կուզեմ
Երկնքից ամպեր կուզեմ
Ամպերից անձրև կուզեմ
Որ մեր ուզած տա մեզի
Անձրև իջնի վըր ձըզի։

<u>Վիճակի Արուս-համբարձման տոն</u>

Վիճակի Արուսն էլ համարվում էր Համբարձման տոնի խորհրդանիշ տիկնիկը։ Վիճակի Արուսին պատրաստելու համար աղջիկները վերցնում էին խաչաձև փայտ, շորեր հագցնում, գլխին հատուկ հարմարանք դնում՝ վրան աչքեր և բերան նկարելով։ Տիկնիկն ունենում էր հատուկ ճակատնոց և հարուստ զարդեր։Վիճակի Արուսը հայ ծիսական տիկնիկներից ամենգեղեցիկն է, մարդիկ կարծում էին, թե որքան գեղեցիկ լինի տիկնիկը, այդքան դեղեցիկ կլինի իրենց ճակատագիրը։

Համբարձումը քրիստոնեական տոն է։ Սահմանվել է ի հիշատակ Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերի (ըստ քրիստոնեական եկեղեցու

ուսմունքի՝ Քրիստոսը խաչելությունից 3 օր անց հարություն է առել և իր աշակերտներին 40 օր այցելելուց հետո, համբարձվել երկինք)։ Համբարձումը պատկանում է շարժական տոների թվին, ունի 35 օրվա շարժականություն (ապրիլի վերջից մինչև հունիսի սկիզբը), տոնվում է Զատկի 40-րդ օրը, հինգշաբթի։

Տոնի արմատներն ու խորհուրդը

Ծագումով կապվում է նախաքրիստոնեական տոնացույցին (արտահայտել է մեռնող և հառնող Աստծու, բնության զարթոնքի, վերածնության գաղափարները)։ Հայաստանում Համբարձումը վերածվել է ժողովրդական տոնակատարության. երիտասարդ տղաներն ու աղջիկները Համբարձման առթիվ հավաքում են 7 գույնի ծաղիկ, կժի մեջ լցնում 7 աղբյուրի ջուր, իրենց նշանները գցում ջրի մեջ և Համբարձման գիշերը «աստղունք» դնում, այսինքն՝ դրանք հանձնում աստղերի խորհրդին, որից հետո, ըստ այդ նշանների՝ կատարում գուշակություններ։ Համբարձման կիրակի օրը տոնականորեն զարդարված երիտասարդներն ու աղջիկները կազմակերպում են տոնախմբություններ՝ Համբարձմանը նվիրված երգերի, պարերի (հատկապես վերվերիների՝ որպես հասակի աճի հետ կապված հմայական պարերի), խաղերի ու մրցույթների զուգակցությամբ։ Աղջիկները խմբերով գնում էին սարերը և բազմաթիվ ծաղիկներ հավաքում։ Այնուհետև այդ հավաքված ծաղիկներից ծաղկեպսակներ էին պատրաստում, որոնք համբարձման տոնին պետք է նվիրեին տոնի մասնակիցներին։

Համբարձման ծեսի ժամանակ գովերգվում էին աստղերին, երկինքը, բնությունը, բազմաթիվ գեղեցիկ երևույթներ և հատկապես սերը։ Համբարձման տոնի ժամանակ էին պատրաստվում Արուսի տիկնիկը և կաթնով, որը հետագայում լցնում էին դաշտերը, որպես զոհաբերություն, որպեսզի տարին առատ լինի։Տարբեր շրջաններում պատրաստել են Վիճակի Արուսի մեկ այլ տարբերակ և կոչվել է Ծաղկամեր, որը իրենից ներկայացնում է խաչաձև փայտ զարդարված ծաղիկներով։

Համբարձման տոնը վառ արտահայտված է Հովհաննես Թումանյանի <<Անուշ>>պոեմում։

Համբարձում եկավ, ծաղկունքը ալվան,

Զուգել են հանդեր նախշուն գորգերով.

Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան,

Վիճակ հանելու, աշխույժ երգերով:

Համբարձում, յայլա,

Յայլա ջան, յայլա,

Լավ օրեր, յայլա,

Յայլա ջան, յայլա:

Ասիլիկ Վասիլիկ-Ամանոր

Ամանոր (Կաղանդ, Նոր տարի), տոն, նշվում է տարբեր ժողովուրդների կողմից ընդունված օրացույցում ընթացիկ տարվա վերջին օրվա և հաջորդ տարվա առաջին օրվա գիշերը: Ս. Ծնունդը աշխարհի քրիստոնյաների ամենամեծ և սիրված տոներից է: Իր թե նշանակությամբ, էությամբ, թե խորհրդով Ամանորը զիջում է Ս. Ծննդյանը: Ամանորն ինքնին օրացուցային փոփոխման երևույթ է, և իր մեջ որևէ խորհուրդ չունի: Իսկ Ս. Ծնունդն ամբողջությամբ Խորին Խորհուրդ է՝ Աստծո Որդու Ծնունդը, որը մարդկության համար դառնում է նոր և անվերջանալի սկիզբ: Իզուր չէ, որ շուրջ 2000 տարի մարդկությունն իր տոմարական բոլոր հաշվարկները կապում է Քրիստոսի Ծնունդով՝ նախքան Քրիստոս և Քրիստոսի Ծնունդից հետո:

Տոնի արմատներն ու խորհուրդը Հայերի թերևս ամենաավանդական նոր տարին նշվում էր մարտի 21-ին: Այս տոնը նաև Ծաղկըմուտ է կոչվել՝ վկայակոչելով գարնան գալուստը: Այդ օրը հայ արորդիները նշում են Վահագնի ծնունդը, որը հին հայերի գլխավոր տոնն է համարվել: Օրվա խորհուրդը կրակն էր: Ամանորը (հին հայերենում՝ «նոր տարի»), Ամանոր հայերը նշում էին տարվա առաջին ամսին՝ օգոստոսի 11-ին և կոչվում էր: Հնուց ի վեր հայերը եղևնու փոխարեն Ամանորին զարդարել են ձիթապտղի կամ խնկի ծառ: Մրգերով ու չրերով զարդարված Կենաց ծառը եղել է տոնի խորհրդանիշը:

Գոյություն ունեին յուրահատուկ խմորից պատրաստված տիկնիկներ: Սրանք կոչվում էին Ասիլիկ Վասիլիկներ: Այս տիկնիկները հիմնականում թխվում էին գուշակություններ անելու նպատակով՝ Ամանորի նախօրյակին: Կախված, թե ում համար էին գուշակություն անելու, այս տիկնիկները կարող էին ունենալ տարբեր կերպարանքներ: Դրանք կարող էին լինել մարդու, կենդանու կամ քսակի տեսքով:

Խմորի վրա ձու էին քսում, զարդարում չամիչով և ընկույզով, այնուհետև դնում վառարանի մեջ:

Եթե այն թխվելիս ուռչում էր, ապա ընտանիքում հաջողություն էր լինելու, իսկ եթե սմքում կամ փոքրանում էր, ապա հակառակը՝ անհաջողություններ էին սպասվում: Եթե տանը նոր հարս կար, և թխվելիս փորի հատվածը ուռչում էր, գուշակում էին որ հարսը գալիք տարում պետք է երեխա ունենար: Եթե քսակի տեսքով ասիլիկ-վասիլիկն ուռչում էր, ապա տարին առատ ու հարուստ էր լինելու: Ասիլիկները համարվում էին իգական տիկնիկները, իսկ Վասիլիկներն արական կերպարով տիկինիկները: Արական տիկնիկները պետք է պարտադիր արտահայտված գոտի ունենային:

<u>Ուտիս տատ և Պաս պապ-բարեկենդան, Սուրբ զատիկ</u>

Բարեկենդան, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու շարժական տոներից, նշվում է Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ պաս ընկած ժամանակաշրջանը: Այդ օրը քահանայական դասին և ժողովրդին արտոնվում է ճոխ սեղան և զվարթություն՝ հաջորդող պահքը ուրախ սրտով մտնելու և երկարատև պահոց օրերին դիմակայելու համար: Տոնն ավարտվում է Բուն Բարեկենդանով, որը նշվում է շաբաթապահքերի և Մեծ պահքի նախընթաց կիրակի օրը: Բարեկենդանին մարդիկ զվարճանում էին, երգում, պարում, գցում ճոխ սեղաններ, դիմակավորվում, կազմակերպում խաղեր և ներկայացումներ: Գործածում էին հատկապես յուղալի ուտեստներ, մսեղեն և կաթնեղեն: Բարեկենդանը ուրախության ու զվարճանքի օր է: Այն հիշեցնում է Ադամի և Եվայի կյանքը դրախտում՝ վայելքի և անհոգության մեջ, այսինքն՝ դրախտային կյանքի օրինակն է, որտեղ մարդ կարող էր ճաշակել բոլոր պտուղները, բացի բարու և չարի գիտության ծառերի պտուղներից:

Զատիկ կամ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն որը եբրայերենից թարգմանաբար նշանակում է անցում, զատում, բաժանում, հեռացում , քրիստոնյա եկեղեցիների, այդ թվում նաև Հայ Առաքելական Եկեղեցու հնագույն և գլխավոր տոնը, հինգ տաղավար տոներից մեկը: Զատկին նախորդում է Ավագ շաբաթը: Զատկի հետ առնչվող գլխավոր արարողությունները սկսվում են Ավագ շաբաթվա շաբաթ օրը և ավարտվում երկուշաբթի: Շաբաթ երեկոյան մատուցվում է Քրիստոսի հարության ճրագալույցի կամ ճրագալույսի պատարագ, որով վերջանում է Զատկին նախորդած

յոթ շաբաթ տևած Մեծ Պասի շրջանը: Պատարագի ավարտին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով և ստանում «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» պատասխանը:

Տոնի արմատներն ու խորհուրդը

Ուտիս տատն ու Պաս պապը հանդիսանում էին Բարեկենդանի տոնի խորհրդանիշները: Այս երկու կերպարները մշտական պայքարի մեջ էին գտնվում: Ուտիս տատը պատկերվում էր թմբլիկ և կարմրաթուշ տիկնիկի տեսքով, ով ձեռքին միշտ շերեփ ուներ: Ի հակադրություն դրան, Պաս պապը պատկերվում էր նիհար և հյուծված՝ ձեռքին էլ միշտ մի փայտ, որով նախատում էր Ուտիս տատին: Ուտիս տատը համեղ, յուղալի կերակուրներ էր պատրաստում երեխաների համար, որպեսզի նրանք ուտեն և զորացնեն իրենց մարմինը:

Ակլատիզ

Պաս պապի կերպարը հայտնվում էր մարդկանց տներում Ակլատիզ տիկնիկի տեսքով: Ակլատիզ պատրաստում էր տան ամենատարեց կինը՝ բոլորից թաքուն: Ակլատիզը պատրաստում էին հիմնականում փայտից կամ ծղոտից: Ակլատիզը խստահայաց ծերունու տեսքով տիկնիկ էր, որի ոտքերից ամրացնում էին սոխ կամ կարտոֆիլ: Սոխը վերածնության ու հարության խորհրդանիշ էր. պահքի վերջին օրն այդ սոխից ապուր էին պատրաստում՝ միայն սոխից և ջրից, որն էլ հաղիսանում էր պահքի վերջին կերակուրը:

Տիկնիկների վրա էլ ամրացնում էին 7 փետուր, որոնք էլ խորհրդանշում էին մեծ պահքի 7 շաբաթները: Փետուրներից երեքը հիմնականում սպիտակ էին լինում, մեկը՝ սև ու սպիտակ, իսկ մյուս երեքը՝ սև: Սպիտակ փետուրները խորհրդանշում էին պահքի այն շաբաթները, որոնք ընդգրկում էին ձմռան շրջանը, երբ հողը ձյունով էր պատված, իսկ մյուս երեք սև փետուրները՝ այն շրջանը, երբ ձյունն արդեն հալվում էր և երևում էր սև հողը: Ամեն շաբաթը լրանալուց հետո մեկ փետուր հեռացնում էին:

Այս տիկնիկը հանդիսանում էր նաև պասի օրացույց, և մնացած փետուրներով մարդիկ կարողանում էին հաշվարկել թե ինչքան է մնացել պասի ավարտին: Ակլատիզի թևերից քարեր էին կախում և այն ամրացնում երդիկից, որպեսզի երեխաներին վախեցնեին, որ եթե նրանք խախտեն պահքի կանոնները՝ Ակլատիզը

քարերով կհարվածի նրանց: Իսկ նրա վզից կախված կծու պղպեղներն էլ կվառեին երեխաների բերանը:
Ակլատիզը հիմնականում նիհար էր լինում և հյուծված: Ակլատիզը հանդիսանում էր տղամարդկային ուժի խորհրդանիշը, որը պետք է հսկեր հնազանդությունը: Տարբեր գավառներում տարբեր էին Ակլատիզի անվանումները՝ Ախլոճ, Ախացել, Ախելուծ, Գոգոռոզ, Խուխուլիճ, Խուլուճիկ, Մռմռռոզ, Մռմռաս, Մեծպաս, Ֆռիկ, Որոջբեկ և այլն: Ուրախ պարերը բարեկենդանի անբաժան մասն են եղել: Պարերը սկսվում էին բարեկենդանի առաջին օրը և օրեցօր ավելի աշխուժանում: Վերջին օրերը դրանք վերածվում էին համագյուղական և համաթաղային միջոցառման:

Հայկական կենցաղում եղել են նաև շատ ուրիշ տիկնիկներ, որոնք ժամանակի ընթացքում ամբողջությամբ դուրս են մղվել կենցաղից և մոռացվել: Վերը թվարկված ծեսերից շատերն այլևս գոյություն չունեն, և ծեսերի վերացման հետ էլ դրանց խորհրդանշող տիկնիկները նույնպես դուրս են մղվել կենցաղից: Սակայն կենցաղում դրանց քիչ կիրառությունը չի խանգարում դրանց մնալ մշակութային ամենագեղեցիկ տարրերից մեկը:

Գլուխ վեցերորդ

Տեխնոլոգիա – Ձեռնարկատիրություն, Տնտեսագիտություն

Տնտեսագիտությունը հասարակական գիտություն է որն ուսումնասիրում է ապրանքների և ծառայությունների արտադրությունը, բաշխումը և սպառումը: Տնտեսագիտությունը կենտրոնանում է տնտեսվարող սուբյեկտների վարքագծի, նրանց փոխներգործության և ամբողջ տնտեսության աշխատանքի վրա: Միկրոտնտեսագիտությունը վերլուծում է տնտեսության հիմնական տարրերի գործունեությունը, որը ներառում է անհատական տնտեսվարողներին և շուկաները, նրանց փոխազդեցությունը և վերջինիս արդյունքները: Անհատական տնտեսվարողներ կարող են համարվել, օրինակ՝տնային տնտեսությունները, ֆիրմաները, գնորդները և վաճառողները: Մակրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է ամբողջ տնտեսությունը (համախառն արտադրություն, սպառում, խնայողություններ և ներդրումներ) և նրա վրա ազդող գործոնները՝ ներառյալ ռեսուրսների (աշխատանք, կապիտալ և հող) թերզբաղվածությունը, գնաճը, տնտեսական աճը և կիրառվող քաղաքականությունները:

<<Մարդիկ հիմնականում ո՛չ մտադիր են նպաստել հասարակական շահին, ո՛չ էլ գիտեն՝ ինչ չափով են դրան նպաստում իրականում: Նրանք միայն հետևում են իրենց շահին, և փորձելով ստանալ առավելագույն հնարավոր արժեքը՝ հետամուտ են լինում միայն սեփական օգուտին և դրանով հանդերձ անտեսանելի ձեռքի շնորհիվ նպաստում են մի բանի, որը նրա մտադրությունների մեջ ամենևին չկար: Հետևելով սեփական շահին՝ հաճախ նրանք ավելի մեծ չափով են նպաստում հասարակական շահին, քան երբ իրականում ունեն վերջինիս նպաստելու մտադրություն>>:

Ադամ Սմիթ

Ադամ Սմիթի «Ազգերի հարստության պատճառների և բնույթի հատազոտություն» աշխատությունը (1776 թվական) համարվում է «տնտեսագիտության ծնունդը որպես առանձին գիտակարգ»: Գիրքը, հողը, աշխատանքը և կապիտալը համարում էր արտադրության գործոններ՝ ազգերի հարստության ստեղծման հիմնական մասնակիցները:

Առաջին տնտեսագիտական աշխատությունները գրվել են Միջագետքում, Հին Հունաստանում, Հին Հռոմում, Հնդկաստանում, Չինաստանում, Պարսկաստանում, Արաբական աշխարհում: Տնտեսագիտությունը հասարակական գիտություն է և ունի ոլորտներ, որոնք հարում են այլ ոլորտներին՝ տնտեսական աշխարհագրություն, տնտեսական պատմություն, հասարակական ընտրություն, էներգիայի էկոնոմիկա, ընտանիքի էկոնոմիկա և այլն: Այս գիտությունը «քաղաքատնտեսությունից» վերանվանվել է «տնտեսագիտության» 19-րդ դարի վերջին Ալֆրեդ Մարշալի կողմից: Այդ ժամանակ տնտեսագիտությունը ներառեց ուսումնասիրության ավելի լայն շրջանակներ՝ ավելի ինտենսիվորեն օգտագործելով մաթեմատիկան, որն օգնեց այս գիտությանը կայանալ և քաղաքական գիտակարգից վերածվել հասարակական առանձին գիտության:

Կան տնտեսագիտության ժամանակակից տարբեր սահմանմանումներ, որոնք արտացոլում են էվոլյուցիոն տեսակետը կամ տնտեսագիտության այլ տեսակետներ:

Անտիկ, մինչ Վերածննդյան ժամանակաշրջանի այլ գրողներ և մտավորականներ են Արիստոտելը, Քսենոփոնը, Պլատոնը որոնք ևս իրենց աշխատություններում անդրադարձել են տնտեսագիտությանը:

<u>Ընտանեկան տնտեսվարություն</u>

<<Ընտանիքը հասարակության բյուրեղն է>>:

<<Որքան ամուր է ընտանիքը, այդքան ամուր է պետությունը>>:

Ընտանիքը հասարակության կարևորագույն օղակներից է: Այն հանդիսանում է ժամանակակից հասարակության ամենահիմնավոր, հուսալի և վստահելի միավորը: Ցանկացած պետությունում ընտանիքը մեծ դեր ունի զարգացման, կայունության և կառավարման գործընթացում: Ընտանիքի անդամներն ակտիվորեն շփվելով միմյանց հետ, փոխանցում են տեղեկություններ , գիտելիքներ, տպավորություններ , նորություններ: Հետևաբար, ընտանիքը կատարում է նաև հաղորդակցական գործառույթ: Ցանկացած ընտանիք մշտապես ունի սննդի, ջերմության,

պաշտպանության, աշխատանքի, շփման և այլ կարիքներ։ Նման կարիքների բավարարման համար մարդն մշտապես օգտագործում է որոշակի միջոցներ՝տեխնիկա, տեխնոլոգիաներ, ֆինանսական միջոցներ, նյութեր և այլն։ Ընտանիքի կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը կապված է պահանջների բավարարման և միջոցների կուտակման հետ։ Կուտակված միջոցները պետության, հասարակության, ձեռնարկությունների, ընտանիքի կամ առանձին մարդկանցնտնօրինության տակ գտնվող պաշարներ են։ Տնային տնտեսության վարումն իր մեջ ընդգրկում է ընտանիքի անդամների կարիքների բավարարումը, ունեցվածքի կուտակումը և ժառանգաբար այն փոխանցման ապահովումը։ Այս ամենի իրականացման համար անհրաժեշտ է կողմնորոշվել սեփական պահանջների բավարարման հարցում և գտնել ֆինանսական գործունեության արդյունավետ եղանակներ, որն ընտանեկան բյուջեն ՝դրամական միջոցների մուտքն ու ծախսը, խնայողությունները ճիշտ հաշվարկելու և օգտագործելու հնարավորություն կընձեռի։

Եթե տեխնոլոգիան աշակերտներին օգնում է սովորել՝ ինչպես կարելի է սեփական ձեռքերով առարկաներ և իրեր պատրաստել, ապա ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը օգնում է նրանց հասկանալու՝ արդյոք այդ առարկան պիտանի է օգտագործման համար, արդյոք այն ունի պահանջարկ և կարո՞ղ է հետաքրքրել մարդկանց այնքան, որ նրանք պատրաստ լինեն այն գնելու, արդյոք իրենք պատրաստելու ճեշտ առարկա են ընտրել, իսկ միգուցե պետք էր բոլորովին այլ, ավելի օգտակար առարկա կամ իր պատրաստել։ Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը աշակերտի պետք է խրախուսի խորհելու նաև հետևյալ հարցերի շուրջ. արդյոք ինքը ճիշտ եղանակ է ընտրել և քայլերի ճիշտ հերթականություն սահմանել այդ առարկան պատրաստելու համար, այդ առարկայի պատրաստումով ինքը չի՞ վնասում շրջակա միջավայրը և բնությունը։ Պետք չէ թյուր կարծիք կազմել այն մասին, թե ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ներդրումը ենթադրվում է, որ աշակերտը պետք է ինչ-որ բան իր ձեռքով պատրաստի և անպայման շտապի մոտակա խանութը՝այն վաճառելու համար։ Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ներդրումը ենթադրում է, որ աշակերտը պետք է կարողանա հասկանալ և գնահատել իր պատրաստած առարկայի ապրանքային արժեքը։ Նա պետք է

հասկանա և կարողանա պատրաստել այնպիսի մի բան, որը կհետաքրքրի և անհրաժեշտ կլինի մարդկանց, կհամապատասխանի նրանց ճաշակին և ցանկություններին: Պարտադիր չէ, որ նա անպայման վաճառի իր պատրաստած առարկան կամ իրը: Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը կնպաստի, որպեսզի աշակերտները.

- Մտածեն կաղապարներից դուրս,
- Մտածեն ստեղծագործաբար
- Մտածեն նոր ձևով, լինեն նորարար
- Դառնան ինքնավստահ
- Կարողանան կայացնել որոշումներ
- Ձեռք բերեն կամային հատկանիշներ՝ նախաձեռնողականություն, համարձակություն, խիզախություն, ինքնուրույնություն, վճռականություն և տոկունություն
- Կարողանան նեգրավվել թիմային աշխատանքում
- Կարաղանան պլանավորել գործողությունները
- Ձեռք բերեն առաջնորդական հատկանիշներ
- Սովորեն փող աշխատել
- Լինեն խելացի սպառողներ
- Լինեն պարկեշտ և խելացի իրենց գործունեության մեջ և առհասարակ կյանքում
- Կարողանան իրենց հաջողությունները կիսել շրձապատի հետ, լինել բարեգործ:

Վերջնարդյունը ավելի տեսանելի դարձնելու համար կիրառում ենք T-աձև աղյուսակ մեթոդը: Սխեմատիկ առումով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, ուր գրված են միևնույն հասկացության, հարցի հակառակ որակները, դրական կամ բացասական կողմերը, բերված են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկակի պատասխան արտահայտող արձագանքների գրառման համար:

դրական կողմեր	բացասատան կողմեր

Եզրակացություն

Ես ևս մեկ անգամ համոզվեցի, որ տեխնոլոգիան դա ոչ միայն ուսումնական մեկ առարկա է, այլ մի ամբողջ համակարգ, որի հետազոտելու և ուսումնասիրելու արդյունքում աշակերտները զինվում են տեխնոլոգիական գիտելիքներով և հմտություններով, ուսումնասիրում են մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, սովորում կողմնորոշվել բարդ իրավիճակներում, որոնք առաջանում են ժողովրդական տնտեսության շուկայական հարաբերությունների անցման ժամանակաշրջանում: Սկսած առաջին դասարանից երեխաները կուսումնասիրեն երկրաչափական պատկերներին և մարմիններին, կկարողանան կատարել առարկաների երկրաչափական տեսքի վերլուծություն: Կզարգացնեն իրենց երևակայությունը խաղերի միջոցով, որոնք ամուր և զգալի հիմք կդնեն բարձր դասարաններում մաթեմատիկա և երկրաչափություն առարկաների համար:

Օրիգամիի միջոցով կզարգանա աշակերտների ոչ միայն մտավոր կարողությունը, այլ նաև կօգնի խոսքի ձևավորմանը, կնպաստի մանր մատորիկայի զարգացմանը և այլն:

Բացի այս ամենից աշակերտների մեջ կձևավորվեն նաև մարդկային բարձր արժեքներ՝ բարություն, ազնվություն, արժանապատվության և պատաս-խանատվության զգացում,դիմացինին գնահատելու ու ուրախություն պատճառելու կարողություն:

Աշակերտները ծանոթանալով շրջակա աշխարհի առարկաներին, երևույթներին և նյութերին, դեռ վաղ մանկությունից սովորում է խնայողաբար օգտագործել բնության ռեսուրսները, սիրել և սրտացավ վերաբերվել դրանց:

Դարեր ի վեր հայը իր դեմքը, ազգային ինքնությունը պահպանել է մշակույթի և կրոնի շնորհիվ: Ուսումնասիրելով հայկական կիրառական արվեստի նմուշները հասկանում ես, որ անկախ քաղաքական իրավիճակից, ժամանակշրջանից, հոգեվիճակից հայերը միշտ արարել են, և իրենց կյանքից առավել են դասել արվեստի այդ գլուխգործոցները, որպեսզի այն անցնելով ժամանակի միջով հասնի մեզ և մենք էլ փոխանցենք մեր սերունդներին, **ու հայը ապրի հավերժ:**

Ուսումնասիրելով հայկական հեթանոս ծեսերը, սովորությունները և ծիսական տիկնիկները աշակերտները ավելի ճիշտ են ըմբռնում եկեղեցական տաղավար տոները, իմանալող նրանց արմատները, խորհուրդը, անցյալի և ներկայի կապը։

Անհնար է պատկերացնել տեխնոլոգիայի դասաժամերը առանց հայ գրականության։ Տարբեր ստեղծագործություններում հեղինակաները հայուհու և հայ մարդու կերպարը ավելի վառ ներկայացնելու համար խոսել են հայկական զորգերի, ասեղնագործ իրերի, զարդերի, հագուստի, աշտասիրության, նրբագույն ճաշակի մասին։

Ուսումնասիրելով տվյալ տարածաշրջանի տարազը, ազգային սովորությունները, գորգագործական արվեստը աշակերտները ծանոթանում են այդ շրջանի աշխարհագրական և քաղաքական դիրքին, իմանում կարևոր տվյալներ այդ տարածաշրջանի մասին։

Ժամանակակից մարդը պետք է լինի ստեղծագործ, հրարամիտ ֆինանսապես անկախ։ Այս ամենի համար աշակերտները դեռ փոքր տարիքից (իհարկե տարիքին համապատասխան) ստանան տնտեսագիտական կրթություն։ Նա պետք է սովորի ուսումնասիրել շուկան, և ստեղծել այնպիսի բարիք որը կբավարարի սպառողի պահանջներին։

Այս ամենից մենք հանգում ենք մեկ եզրակացության՝ ուսումնասիրելով տեխնոլոգիա ուսումնական առարկան աշակերտները զինվում են գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, գաղափարներուվ որոնք ուղեկցելու են իրեն ողջ կյանքի ընթացքում, լինելով բազմակողմանի զարգացածմարդ, հասարակության լիարժեք անդամ։

Օգտագործած գրականության ցանկ

1.<<Տեխնոլոգիա>> ուսուցչի ձեռնարկ- հեղինակ՝ Սահակ Հովսեփյան, Աշոտ Հարությունյան, Մայիս Աղաջանայն, Լիանա Վերդյան

2. Ձեռնարկատիրական կրթության ձեռնարկ- Հայաստանի պետական նվաճումներ

3.Հայկական տարազ 18-19դարեր- ալբոմ կատալոգ

4.Հայկական ասեղնագործություն- հեղինակ՝Կարինե Պապիկյան, Ժաննա Ավետիսյան

5.<<Օրիգամի>> ուսումնական ձեռնարկ-Հեղինակ՝ Կարինե Պապիկյան

6.Մանկական գանձարան- Տաթև գիտակրթական նամալիր

7.Հայ հին վիպաշխարհ-Սարգիս Հարությունյան

8.https://www.armgeo.am/armenian-national-dolls/

9.https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D5%B6

10.https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%AB%D5%AC%D5%AB%D5%AF%D5%AB%D5%A1

11.https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B9%D5%A1%D6%83%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6